

3002 972 83

ՀԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՍԻ ՔԱՐՏՈՒՀԱՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊ-
ՉԱԿԱՆ-ՄԱՍՍՍԱՅԱԿԱՆ ՅԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒԺԵՂԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մատնանշելով այն առանձնապես կարևոր
կուսակցական-ֆաղափական նշանակությունը,
վոր ունի «Բայշեիկ» ժուրնալի (№ 5—6) առաջ-
նորդողը՝ «Ավելի բարձր աստիճանի վրա դնել
կազմակերպչական-կուսակցական և դաստիա-
րակչական աշխատանքը» վերնագրով, նկատի ու-
նենալով կազմակերպչական-կուսակցական և մաս-
սայական աշխատանքի կարևորությունը, Հա-
յաստանի Կ (բ) Կ-ի կենտկոմի ֆարտուղարու-
թյունն անհրաժեշտ է համարում՝

1. Առաջարկել Հայաստանի Կ (բ) Կ-ի բոլոր
ֆաղկոմներին, շրջկոմներին, կուսկոմներին և
բջիջներին, մինչև հունիսի մեկը ծավալել «Բայշե-
իկ» ժուրնալի առաջնորդողի ուսումնասիրու-
մը, նպատակ դնելով ե՛լ ավելի ամրացնել և խո-

բացնել կուսակցական-մասայական աշխատանքի վերակառուցումը և հասցնել այդ աշխատանքը նոր, ավելի բարձր աստիճանի: Կենտկոմն անհրաժեշտ է գտնում «Բալլըիկի» առաջնորդողում արժարժված հարցերը սերտորեն շաղկապել Համկ (բ) Կ-ի կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումների իրականացման ստուգման հետ, սովյալ կազմակերպության, բջիջի և կուսխմբակի կոնկրետ խնդիրների հետ:

2. Հանձնարարել կենտկոմի կազմի քանակական բաժնին, յեղնելով Հայաստանի կազմակերպչական կուսակցական աշխատանքի վիճակից, «Բալլըիկի» առաջնորդողի դիրքավորումից և Համկ (բ) կենտկոմի Նիժնի-Նովգորոդի ավտոգործարանի և Սարատովի կոմբայնների գործարանի վերաբերյալ կայացրած վորոշումներից՝ մշակել և ներկայացնել կենտկոմի քարտուղարության ու բյուրոյի մայիս-հունիս ամիսների միջոցներին ի հաստատություն կոնկրետ ձեռնարկումներ ներկուսակցական շինարարության հետևյալ հիմնական հարցերի վերաբերմամբ՝

ա) Քաղկումների, կուսկումների և շրջկումների կազմի քանակական բաժնիների աշխատանքը:

բ) Արտադրության մեջ կուսակցական ուժերի բաշխումը բարելավելու և կամուրջառների ա-

վանգարդային դերը բարձրացնելու ձեռնարկումները:

գ) Ստորին կուսակցական ակտիվի պատրաստումը:

դ) Միանձնյա կառավարման և կուսակցական կազմակերպության դերի ամրացումն արտադրության ղեկավարման ասպարիզում:

ե) Կուսակցական որվա նախապատրաստումը ու կիրառումը և դրա արդյունքների ընդհանրացումը:

զ) Կուսկազմակերպությունների, բջիջների և կուսխմբակների միջև դրական փոփոխական կազմակերպումը:

է) Հրահանգչության վորակը բարելավելու ձեռնարկումները:

ը) Աշխատանքի քեկնածուների ու ռեգերվի մեջ:

թ) Կուսակցական ինֆորմացիայի դրվածքը և մասսաների տրամադրության հաշվառման կազմակերպումը:

3. Հանձնարարել կենտկոմի Ագիտմասայական բաժնին՝ նույն ժամանակամիջոցում մշակել հետևյալ հարցերը՝

ա) Քաղկումների, շրջկումների և կուսկումների ագիտմասայական բաժնիների աշխատանքը:

բ) Անհատական ու խմբակային ագիտացիայի կազմակերպումն ու վարակը.

գ) Արտադրական խորհրդակցությունների աշխատանքի վերակառուցումը.

դ) Սոցիալիստական աշխատանքի բարձր ձեւերի արմատացումը (հերքափոխությունների հանդիպական պլաններ, տնտեսավարկային բրիգադներ և այլն) :

4. Առաջարկել կենտկոմի կուլտպրոպագանդին՝ մշակել հետևյալ հարցերը՝

ա) Հերքափոխությունների դպրոցներն ու խմբակները.

բ) Մարքսիստական-լենինյան դաստիարակության վորակը բարձրացնելու ձեռնարկումներ.

գ) Թերթեր հերքափոխությունների ու խմբակների համար.

դ) Ձեռնարկություններում կուսակցական պատմությունն ուսումնասիրելու կոնֆերանսներ.

յե) Թարմ գրականության հայրալքումը ստորին ողակին :

5. Մայիսի 17-ից մինչև 25-ը քաղաքային ու շրջանային կուսակտիվի ժողովներում ուսումնանախել կազմակերպչական-կուսակցական մասնայական աշխատանքի նոր խնդիրները :

6. Հայաստանի Կ (բ) Կ-ի կենտկոմի հեր-

բական պլենումում հատուկ գեկուցում լսել կուսակցական կազմակերպչական և կուսդաստիարակչական աշխատանքի հերթական խնդիրների մասին :

7. Հանձնարարել կազմհրահանգչական բաժնին՝ կազմակերպչական խորհրդակցություններում լսել մի շարք կուսկոմների, բջիջների, կուսխմբակների և կուսկազմակերպիչների հատուկ գեկուցումները՝ արդյունաբերական ձեռնարկություններում, տրանսպորտում, խորհումտեսություններում, ՄՏԿ-ներում և խոշոր կոլտնտեսություններում կատարվող կուսկազմակերպչական և կուսդաստիարակչական աշխատանքի մասին :

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ
ԴԱՍՏԻԱՐԱԿԱԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՎԵԼԻ
ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆԻ

(«Բայլշևիկ»-ի 1932 թ. № 5—6-ի առաջնորդողը)

17-րդ Համամիութենական կուսակցական կոնֆերանսը, վորի վորոշումներն անկասկած հանդիսանում են կարևորագույն ետապ մարդկության պատմության մեջ, կուսակցության և մեր յերկրի բանվոր դասակարգի առաջ գրեց հսկայական մի խնդիր — յերկրորդ հնգամյակում կառուցել անդասակարգ սոցիալիստական հաս-

րակութիւն: Կոնֆերանսը նշեց, ՎՍԵՄ յերկրի բնական հսկայական հարստութիւնները, սոցիալիստական շինարարութեան բաղձնիքային տեմպերը, բանվորների և կոլտնտեսականների լայն մասսաների աճող ակտիվութիւնը, կուսակցութեան ճիշտ գիծը — ասպնդովում են արտադրական ուժերի այնպիսի հզոր ծավալում յերկրորդ հնգամյակում, վորի հիման վրա վերջնականապէս կվերացվեն կապիտալիստական տարրերը և դասակարգներն առհասարակ: Դասակարգային տարբերութիւնների և շահագործման ծնունդ տվող պատճառների լիակատար վճռահանումը, կապիտալիզմի մնացորդների հաղթահարումն եկոնոմիկայի և մարդկանց գիտակցութեան մեջ, աշխատավոր ամբողջ աղքատակութեան վերածումն անդասակարգ սոցիալիստական հասարակութեան գիտակից և ակտիվ կառուցողներին — ահա հիմնական բաղաձայն խնդիրը, վոր դրեց մեր կուսակցութեան 17-րդ կոնֆերանսն առաջիկա պատմական ժամանակաշրջանի, յերկրորդ հնգամյակի համար:

Կուսակցութիւնը դրեց այս խնդիրը, միանգամայն զգաստ հաշվի առնելով եկոնոմիկայի և դասակարգերի ուժերի փոխհարաբերութեան մեջ կատարված այն հսկայական տեղաշարժերը, վոր

րոնց հասել է ԽՍՀՄ առաջին հնգամյակում: Վիթխարի չափով աճել է սլոյկտարիատի դասակարգային զորութիւնը սոցիալիստական ինդուստրիայի վերելքի, կոլտնտեսական շարժման աճման հիման վրա: Ավարտելով սոցիալիստական տնտեսութեան հիմքի կառուցումը 1931 թ., կուսակցութիւնը կարողացավ առաջադրել վորպէս յերկրորդ հնգամյակի հիմնական և վճռական տնտեսական խնդիր — «ամբողջ ժողովրդական տնտեսութեան վերակառուցման ավարտումը, նորագոյն տեխնիկական բազայի ստեղծումը ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերի համար» (Համկոմկուսի (բ) 17-րդ կոնֆերանսի բանաձևից):

Այս բոլոր պատմական վիթխարի խնդիրները, վոր նշեց 17-րդ կուսակցական կոնֆերանսը, մենք կարող ենք լուծել միայն համառոտ են պայքար մղելով կապիտալիզմի մնացորդներին դեմ, անողորմ ճնշելով կապիտալիստական մեռնող ելեմենտների դիմադրութիւնը, հաղթահարելով բուրժուական և մանր-բուրժուական նախապաշարումներն աշխատավորների մեջ, համառ աշխատանք տանելով միլիոնավոր մասսաների սոցիալիստական վերադաստիարակութեան համար, մենք կկարողանանք վճռահանել դասակարգերը և

դասակարգային տարբերությունները, լիովին վերացնել դասակարգային բաժանման ծնունդ տվող բոլոր պատճառները վոչ թե ինքնահոսի միջոցով, վոչ թե «զարգացման սահուն ընթացքի» հետևանքով, կամ «ազատ լողալով կյանքի ալիքներում», այլ դասակարգային սուր պայքարի պայմաններում, մի պայքար, վորը պահանջում է մեծագույն կազմակերպվածություն և ակտիվություն աշխատավորների պրոլետարական ավանգարդի կողմից:

Վոչ թե պրոլետարիատի դիկտատուրայի թուլացումը, վոր փորձում եյին քարոզել ոպորտունիստորեն տրամադրված մի քանի «թերեթիկներ» (համատարած կոլեկտիվացման պայմաններում խորհուրդների «մահացման» մասին յեղած խոսակցությունները և այլն), այլ պրոլետարիատի դիկտատուրայի լիակատար ամրապնդումը,—ահա այն խնդիրը, վոր դնում ե կուսակցությունը սվյալ ետապի համար, վորպես կարևորագույն պայման անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու յերկրորդ հնգամյակում:

Լենինը շատ անգամներ ընդգծել ե, վոր պրոլետարիատի դիկտատուրայի, պրոլետարական պետության լիակատար մահացման համար պետք

ե հասնել կոմունիզմի բարձրագույն փուլին: «Պետության լիակատար մահացման համար հարկավոր ե լիակատար կոմունիզմ»,— գրում եր Լենինը «Պետություն և հեղափոխություն» գրքում: «Պետությունը կարող ե լիովին մահանալ այն ժամանակ, յերբ հասարակությունը կիրառործի «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ կարիքների» կանոնը, այսինքն՝ յերբ մարդիկ այն աստիճան կվարժվեն պահպանելու համակեցության հիմնական կանոնները և յերբ նրանց աշխատանքն այն աստիճան արտադրողական կլինի, վոր նրանք սիրով կաշխատեն իրենց ընդունակությունների չափով... Մթերքների բաշխումն այն ժամանակ չի պահանջի նորմավորում հասարակության կողմից յուրաքանչյուրի ստանալիք մթերքների քանակության վերաբերմամբ, յուրաքանչյուրն ազատորեն կստանա «կարիքների չափով» (Լենին, հատ. 21, հրատ. 2-րդ, էջ 436):

«Մինչև այն ժամանակ, քանի դեռ չի յեկել կոմունիզմի բարձրագույն փուլը, սոցիալիստները պահանջում են ամենալիստ վերահսկողություն հասարակության և պետության կողմից աշխատանքի չափի և սպառման չափի վրա...» (նույն տեղ, էջ 436):

կուսակցութիւնը հանդիսանում է բանվոր դասակարգի քաղաքական առաջնորդը, պրոլետարիատի դասակարգային համախմբման բարձրագույն ձևը, հիմնական ղեկավար ուժը պրոլետարիատի դիկտատուրայի սխտեմում: Միանգամայն ակնհայտ է, վոր կուսակցութեան դերը վորպէս ղեկավար ուժ, պրոլետարիատի դիկտատուրայի սխտեմում յերկրորդ հնգամյակում աւելում է:

Լենինը շատ անգամ ընդգծել է կուսակցութեան բացառիկ դերը, վորպէս պրոլետարիատի առաջավոր ավանգարդի, վորը բարձրացնում է դիկտացութեան մակարդակը, քաղաքականապէս դաստիարակում է պրոլետարիատի և աշխատավորներին հետամնաց խավերը: Լենինը նշել է, վոր կուսակցութեան այդ ղեկավար դերը պետք է պահպանվի մինչև կոմունիզմի բարձրագույն փուլը: «Ժխտել կուսակցականութիւնը՝ կոմունիզմի տեսակետից, նշանակում է թուիչք կատարել կապիտալիզմի խորտակման նախորդակից (Գերմանիայում) վոչ թէ դեպի կոմունիզմի ստորին և միջին, այլ բարձրագույն ֆազը», — գրում է Լենինը, քննադատելով «ձախ» կոմունիստներին Գերմանիայում (Հատ. 25, հրատ. 2-րդ, էջ 190):

Պրոլետարիատի դիկտատուրայի լիակատար ամրապնդումը, կուսակցութեան ղեկավար դերի ամրացումը նշանակում է ե՛լ ավելի լայն ծավալել, բարելավել կուսակցութեան կազմակերպչական, դաստիարակչական աշխատանքը:

Համկոմկուսի (ր) 17-րդ կոնֆերանսի վորոշումները դրին տասնյակ միոնավոր աշխատավորների դիկտացութեան վերափոխման, նրանց սոցիալիստական վերադաստիարակութեան և մանր-բուժուական նախապաշարումների հաղթահարման խնդիրը: Այդ վորոշումները պահանջում են, վորպէսզի քաղաքի և գյուղի կուսակցական կազմակերպութիւններն ե՛լ ավելի լայն ծավալեն դաստիարակչական աշխատանքը մասսաների մեջ և իրենց շարքերում: Կուսակցութեան կազմակերպչական-կուսակցական և մասսայական-ագիտացիոն աշխատանքի լիակատար բարելավման հարցերը ներկա ետադում ստանում են առանձնապէս կարևոր նշանակութիւն նախ և առաջ նրա համար, վոր կուսակցութիւնը շարժման մեջ է դնում, մոբիլիզացիայի յետենթարկում հսկայազանգված մասսաներին սոցիալիստական շինարարութեան բոլոր ճակատամասերում, քաղաքում և գյուղում, գլխավորում է բանվոր դասակարգի հարածուն ակտիվութիւնը,

ղեկավարում ե կոլտնտեսական մասսաները:

Վերջին տարիներում սոցիալիստական ին-
դուստրիայի աճման հիման վրա ԽՍՀՄ բանվոր
դասակարգի շարքերը լրացվեցին նորանոր մի-
լիոններով: Արդյունաբերական պրոլետարների
յերիտասարդ նոր կազմերը կարիք ունեն ստանա-
լու արտադրական անհրաժեշտ ունակություններ,
տիրապետելու տեխնիկային, բայց վոչ միայն
այդ, — անհրաժեշտ ե նաև բարձրացնել նրանց
քաղաքականապես մինչև պրոլետարական, հա-
մասրետական խնդիրների լմբռնման մակարդա-
կը, անհրաժեշտ ե ոգնել նրանց ձեռք բերելու
պրոլետարական կոմիվածություն, անհրաժեշտ ե
դաստիարակել նրանց հեղափոխական ինտերնա-
ցիոնալիզմի վոգով: Հենց այս նոր կազմերի վրա
յե ընկնում զգալի չափով համաշխարհային տեխ-
նիկայի նորագույն նմուշների համաձայն կառուց-
ված մեր գիղանտների առաջավոր տեխնիկայի
տիրապետման խնդիրը, գիղանտներ, վորոնք
հաճախ ունեն աշխարհիս լավագույն սարքավո-
րումը: Յուրաքանչյուր բանվորի գիտակցության
մեջ արմատացնել արդյունաբերության նոր հըս-
կաների անխափան, բարեկարգ աշխատանքի
վիթխարի նշանակությունը սոցիալիզմի գործի
համար, համաշխարհային պրոլետարիատի գիր-

քերի ամրապնդման համար — ահա՛ նոր գործա-
րանների կուսակաղմակերպությունների ամենորյա
կարևորագույն խնդիրը:

Բանվոր դասակարգի շարքերը լրացնող նոր
կազմերի, — վորոնք զգալի մասով նոր են յեկել
գյուղից, — քաղաքական դաստիարակությունը
նույնպես պետք ե գրվի կուսակաղմակերպություն-
ների ուղադրության կենտրոնում նաև հին ձեռ-
նարկություններում:

Մեր նոր գործարաններում, վորոնք տիրա-
պետում են անընդհատ հոսող մասսայական ար-
տադրության տեխնիկային, վորոչ չափով տա-
քածված են յեղել փտած, մեխանիստական, հա-
կաբայլչեիկյան «թեորիաներ» այն մասին, իբր
թե կոմվեյերը ավտոմատիկ կերպով կարգավո-
րում ե ամբողջ աշխատանքը, հետևաբար ավե-
լորդ են դառնում սոցմրցումը ե հարվածայնու-
թյունը, գործավարձը ե տնտհաշվարկը:

Այս «թեորիաների» կողմնակիցները չեն հաս-
կացել այն, վոր վերջին հաշվով գործը վճռում ե
մարդկանց միշտ կազմակերպումը, վոր կուսակ-
ցությունն ապահովում ե արտադրողական ուժե-
րի վիթխարի ծավալումը, ղեկավարվելով Մարք-
սի խոսքերով. «Արտադրության բոլար գործիքնե-
րից արտադրողական մեծագույն ուժը հանդիսա-

նում է ինքը՝ հեղափոխական դասակարգը» (Փի-
լիսոփայության աղփատությունը», էջ 158, ընդ-
գծումը մերն է. խմբ.) :

Ինդուստրացման Ֆրոնտից ստացված յուրա-
քանչյուր տեղեկագիրը խոսում է ԽՍՀՄ պրոլե-
տարների աշխատանքային բարձր հերոսության
մասին: Չորս միլիոն հարվածային, 155 հազար
տնտեսավարկային բրիգադ, ահա փայլուն ապա-
ցույցներ այն բանի, վոր աշխատանքը ԽՍՀՄ-ում
հանդիսանում է պատվի գործ, փառքի գործ,
արիություն և հերոսության գործ, վոր կուսակ-
ցության ղեկավարությունը մոբիլիզացիայի յեն
յենթարկվում միլիոնավոր մասսաներ սոցիալիզմի
գործի հաղթանակի համար:

Մարդկանց կազմակերպումը և տեխնիկայի
տիրապետումը վճռում են գործի հաջողությունը
սոցիալիստական արդյունաբերության մեջ: Կոլ-
տնտեսությունների կազմակերպչական-տնտեսա-
կան ամրապնդումը պետք է ավարտի սոցիալիս-
տական հողագործության հաղթանակը: Ընկեր
Ստալինի պատմական վեց ցուցմունքները տալիս
են նոր պայմաններում պայքարելու ծավալուն
ծրագրի՝ հանուն բանվորական ուժի կազմա-
կերպված հավաքագրման, հանուն աշխատանքի
մեխանիզացիայի, հանուն աշխատավարձի ճիշտ

կազմակերպման, հանուն աշխատանքի կազմա-
կերպման, ուժերի ճիշտ դասավորման ձեռնար-
կություն մեջ, հանուն պրոլետարական արտա-
գրական-տեխնիկական ինտելիգենցիայի ստեղծ-
ման, հին դպրոցի ինժեներա-տեխնիկական ուժե-
րի ճիշտ ողջագործման, տնտեսավարկի և ներ-
արդյունաբերական կուտակման:

Կազմակերպչական-կուսակցական աշխատան-
քի կարևորագույն խնդիրը տվյալ ետապում հենց
հանդիսանում է այդ պայմարը հանուն ընկ. Ստա-
լինի վեց ցուցմունքների պրակտիկ իրագործման
և Կենտկոմի դիրեկտիվների կատարման՝ կոլ-
տնտեսությունների կազմակերպչական-տնտեսա-
կան ամրապնդման մասին:

Վերջին ամիսներում մի շարք փաստեր ցույց
տվին, վոր ղեռքս վող ամեն տեղ ճիշտ կերպով
հասկանում են կուսակցական և տնտեսական աշ-
խատանքի միջև յեղած փոխհարաբերությունը,
վող ամեն տեղ ճիշտ իրագործվում է կուսակցա-
կան ղեկավարությունը ձեռնարկության տնտե-
սական կյանքի վերաբերմամբ: Այս հարցերին ան-
ճիշտ մոտեցում ունենալու ամենափայլուն օրի-
նակներ — տնտեսական ղեկավարման փոխարի-
նումը չըջկոմի և Կենտկոմի կողմից հանձնար-
մից, միանձնյա ղեկավարության իրախուսումը,

1008
34704

М. А. МАСНИКОВА
УДАЛЕНА

ինչպես և կուսակցական մասսայական աշխատանքի թույլ կազմակերպումը — հայտաբերվեցին Նիժեգորոդի ավտոգործարանում:

Համկոմկուսի Կենտկոմի վորոշման մեջ Նիժեգորոդի ավտոգործարանի աշխատանքի մասին նշվում է հետևյալը.

«... Գործարանը ներկայումս դադարեցրել է մեքենաների արտադրությունը գլխավորապես գործարանի միանգամայն անբավարար ղեկավարությունից պատճառով:

Գործարանում, շնորհիվ Յերկրկոմի անձիշտ դրույթի՝ լիովին բացակայում է միանձնյա ղեկավարությունը, անտեսական ղեկավարումը փոխարինում են չրջկոմը և ցեխային կուսորդանները, գոյություն ունեն հակառակեցական տրամադրություններ և հալածանք վարչական-տեխնիկական պերսոնալի դեմ, կուսակցական մասսայական թույլ աշխատանք»: Ընդհանրապես ավտոգործարանի կուսակցությունից չրջկոմի վորոշումներն ավելի շատ նման էլին դիրեկցիայի հրամաններին, քան թե կուսակցական կոմիտեի բանաձևերի: Շրջկոմի վորոշումներով հաճախ նշանակվում և հեռացվում էին ցեխերի վարիչները, ինժեներները, վարպետները և այլն: Միտաժամանակ կուսակցության չրջկոմը վերջին տար-

վա ընթացքում կուսակցական աշխատանքի հարցերով դրեթե բոլորովին չի դբադվել, չրջկոմի բյուրոյում յեղել են ղեկուցումներ բաժանմունքների պետերի կողմից (մատակարարման, կոմունալ, պահեստի), բայց չեն քննարկվել կուսակցական աշխատանքի հարցերը: Ամբողջ տարվա ընթացքում միայն մի անգամ ղեկուցում է դրվել կուսակցական մասսայական աշխատանքի մասին մեքենա-հավաքման ցեխում:

Միջամտելով անտեսական ընթացիկ ուղերատիվ աշխատանքին, հաճախ փոխարինելով տնտեսական որդաններին, Նիժեգորոդի ավտոգործարանի չրջկոմը և ցեխային կուսորդանները չեն կարողացել բայլչեիկորեն մոբիլիզացիայի յենթարկել մասսաներին տիրապետելու նոր բարդ արտադրությունը: Միանգամայն անբավարար է յեղել ղեկավարությունը սոցիալիստական մըըըման և մարվածայնության նկատմամբ: Վոչ չըըըկոմը, վոչ կորպուսային կուսբյուրոները չգիտեին մըըըկցող կոմունիստների և անկուսակցական բանվորների թիվը: Մինչև մարտի մեկը մեքենա-հավաքման հսկայական կորպուսում չի յեղել վոչ մի հարվածային բրիգադ: Ավտոգործարանի կուսակցական ղեկավարությունը չի կարողացել լուծել աշխարհի կարևոր հանգուցային

մի խնդիր, ինչպիսին է համասարեցման վերացումը և գործավարձի կիրառումը, վորը հանդիսանում է ընկ. Ստալինի 6 վճռական ցուցմունքներից մեկը: Ավտոգործարանում մինչև վերջին ժամանակներս տիրել է մանր-բուրժուական հավասարեցում աշխատավարձի ասպարիզում՝ արտադրության կարևորագույն ճակատամասերում:

Կուսակցական աշխատանքի թուլության ցուցանիշն ավտոգործարանում հանդիսանում է նաև անբավարար աշխատանքը թեկնածուների հետ: Կուսակցության թեկնածուների 20 տոկոսից ավելին ունի ժամկետանց թեկնածուական ստատ: Կուսակցական բեռնավորում ունեն համեմատաբար քչերը, իսկ բեռնավորման կատարումը չի ստուգվում:

Միանձնյա ղեկավարության սկզբունքի խախտման որինակներ տեղի չեն ունեցել նաև Ռոստովի Սելմաչ գործարանում:

Մի քանի տվյալներ կուսակցական-կազմակերպչական աշխատանքի մասին սև մետաղագործության առանձին ձեռնարկներում ցույց են տալիս, վոր այստեղ ևս հիմնական ողակներում յերբեմն ղեկավարության կոնկրետությունը տընտեսական հարցերի վերաբերմամբ ըմբռնվում է վորպես անմիջական վարչարարություն: Կուսակ-

ցական կազմակերպությունների որակադերը լիքն են տնտեսական ընթացիկ հարցերով, բայց քննարկման և ընդունված վորոշումների բնույթը այդ հարցերի վերաբերմամբ այնպես է, վոր հաճախ հանդիսանում է կրկնություն տնտեսական որդանների աշխատանքի: Հերթափոխային բջիջների քարտուղարների աշխատանքը զգալի չափով անցնում է հումք, մատերիալներ վորոշներով, գործիքների հետևից ընկնելով: Բջիջի քարտուղարը հաճախ փոխարինում է վարպետին և ժամանակ չունի զբաղվելու ներկուսակցական աշխատանքով:

Կուսակցական կազմակերպության ղեկավար դերի մոռացման նման փաստերի, մի քանի ձեռնարկություններում միանձնյա ղեկավարության սկզբունքի նման խախտումների կապակցությամբ ավելորդ չի լինի հիշեցնել կուսակցության Կենտկոմի դիրեկտիվներն այս հարցերի մասին, վորոնք տրվել են դեռևս 1929 թվին: Կենտկոմի վորոշման մեջ՝ արտադրության ղեկավարությունը կարգավորելու և միանձնյա ղեկավարություն հաստատելու միջոցների մասին նշվում էր.

«Կուսբջիջները, լինելով կուսակցության հիմքը, առանձնապես ձեռնարկություններում, սեփեք և իրենց աշխատանքով իրագործեն ձեռ-

նարկության հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքի ղեկավարությունն այնպես, վոր ապահովեն կուսակցության հիմնական դիրքեկտիվները կատարումը պրոֆեսիոնալ և տնտեսական որդանների կողմից, առանց միջամտելու դործարկումի և դիրեկտորի աշխատանքի մանրամասնություններին, հատկապես վարչության ուղեբաժնի կարգադրություններին: Կուսը չի ջնջում պետք է ակտիվ կերպով աջակցեն միանձնյա ղեկավարության սկզբունքի իրագործմանն արտադրության ղեկավարման ամբողջ սխեմայում: Կուսակցական բջիջները վոչ մի դեպքում չպետք է փոխարինեն ձեռնարկությունների ադմինիստրացիային...»:

Միանձնյա ղեկավարության մասին մենք ունենք նույնպես Լենինի վերին աստիճանի կարևոր ցուցմունքները, վորոնք պահպանում են իրենց ամբողջ նշանակությունը և այսօր. «Պետք է սովորել միացնել աշխատավոր մասսաների բուռն, զարնանային հորդ ջրերի նման ափերը հեղեղող միտինգային դեմոկրատիզմը՝ յերկաքե դիպիսիսային հետ աշխատանքի ժամանակ, մի անձի, խորհրդային ղեկավարի կամքին աշխատանքի ժամանակ անվերապա հորին հնազանդվելու հետ» (Հատ. 22, հրատ. 2-րդ, էջ 464):

Առանց տնտեսական և վարչական ղեկավարության, առանց ամբողջ միավարության չի կարող լինել կանոնավոր արտադրություն, հաջող պայքար հանուն պլանի կատարման:

Կազմակերպչական կուսակցական աշխատանքի ճիշտ դրման հետևանքով կառավարող այնպիսի փոխհարաբերություն կուսակցական և տնտեսական աշխատանքի միջև, յերբ կուսակազմակերպությունն իրագործում է ձեռնարկության հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքի իրական ղեկավարությունը, ամենեին չփոխարինելով և չդիմադրելով տնտեսական և վարչական ղեկավարությունը: Կուսակցական կազմակերպությունը պետք է մոտենա տնտեսական հարցերին ամենից առաջ կուսակցական տեսանկյունից, վորպես մասսաների կազմակերպիչ, ապահովի կոմունիստների ավանգարդային դերն արքադարձյալ մեջ ստորին ողակների, կուսխմբերի միջոցով, ապահովի կուսակցության լողունները մասսաներին հասցնելու դործը, մոբիլիզացիայի յենթարկի մասսաներին քաղաքական-տնտեսական հիմնական հարցերի շուրջը հաղորդիչ փոկերի — պրոֆմիությունների, Կոմյեթիստիստիստի, բանվորականների պատգամավորական ժողովների, անկուսակցական ակտիվի մի-

ընդամենը: Ահա կուսակցական բջիջի կարևորագույն խնդիրը:

Այն կուսակազմակերպությունը, վոր սերտորեն կապված է մասսաների հետ, գիտե, թե ինչով է ապրում գործարանային մասսան, կարողանում է այդ կապերի միջոցով շոշափել, հայտարարել տնտեսական ղեկավարության թերությունները, աշխատանքի կազմակերպման բացերը և այլն, վոր գիտի կոնկրետ կերպով, թե վորտե՞ղ և ինչո՞ւ տապալվում է յերբեմն տնտեսական հիմնական խնդիրների կատարումը, — նման կուսակազմակերպությունը միշտ կկարողանա ապահովել ձեռնարկության տնտեսական կյանքի իրական, ներգործոն, կոնկրետ կուսակցական ղեկավարությունը: Քննարկել տնտեսական հանգուցային վճռական հարցերը, մոբիլիզացիայի յենթարկելով այդ հարցերի շուրջը կուսակցական ամբողջ կազմակերպությունը և անկուսակցական բանվորներին, իրագործել վերահսկողություն և հսկողություն ամբողջ տնտեսական աշխատանքի, բոլոր մասսայական կազմակերպությունների — շարժիչ փոկերի — աշխատանքի վրա, թույլ չտալով, վոր տնտեսավարները կամ պրոֆմիություն կազմակերպությունները կորցնեն պատասխանատվությունը զգացմունքը կուսակցության կողմից

ներանց հանձնարարված աշխատանքների համար: — այդ է պահանջում ճիշտ դրված կազմակերպչական-կուսակցական աշխատանքը:

Ուղղորդության ուժեղացումը Յերկուսակցական աշխատանքի հարցերի վերաբերմամբ թելադրվում է առաջին հերթին վերջերս կուսակցության շարքերը լրացնող նոր կադրերին քաղաքականապես դաստիարակելու, ամրակուռ, կայուն բայլելիկներ դարձնելու անհրաժեշտությունը: Լավագույն ապացույցն այն բանի, վոր բացառիկ վստահություն կա դեպի կուսակցությունը, և գնալով է՛լ ավելի ամրապնդվում է նրա կապն աշխատավոր մասսաների, առաջին հերթին պրոլետարական մասսաների հետ, հանդիսանում է կուսակցության այդ աճումը, արդյունաբերության հարյուր հազարավոր լավագույն հարվածայինների և առաջավոր կոլտնտեսականների մուտքը կուսակցության մեջ: 16-րդ համադումարից հետո, 1930 թվի հունիսի 1-ից մինչև 32 թ, հունվարի մեկն ընդունված են 1.245 հազար նոր անդամներ կուսակցության մեջ: Այս վիթխարի աճումը նույնպես պահանջում է ուժեղացնել կազմակերպչական-կուսակցական և դաստիարակչական աշխատանքը կուսակցության մեջ նոր ընդունված ընկերների հետ:

Այնտեղ, ուր դործարանային կազմակերպությունը 4-5 տարի առաջ ուներ մի քանի հարյուր անդամ, այժմ հաճախ կարելի չէ հաշվել մի քանի հազար: Վերցնենք որինակ, այնպիսի մի դործարան, ինչպիսին է Կարլ Մարքսի անվան (Լենին-դրադ) դործարանի կուսակազմակերպության կազմը: Կարլ Մարքսի անվան դործարանի կուսակցական կազմակերպությունն ունի 1011 անդամ, իսկ թեկնածուների հետ միասին՝ 2300 մարդ: Ըստ կուսակցական ստատի նրանք ներկայացնում են հետևյալ պատկերը. 1917 թվից՝ 3, 1917-20 թ.՝ 33, 1921-23 թ.՝ 39, 1924-26 թ.՝ 199 և բացարձակ մեծամասնությունը, մոտ 70 տոկոսը, կուսակցության մեջ ընդունվել է 1929, 1930 և 1931 թվերին: Ինչպես տեսնում ենք, այստեղ աչքի չէ ընկնում համեմատաբար փոքրաթիվ կուսակցականների մի կորիզ, վորոնք կուսակցության մեջ մտել են քաղաքացիական պատերազմի շրջանում, ընկերների շատ զգալի խավը կուսակցության մեջ մտել է լենինյան կոչի շրջանում, իսկ մեծամասնությունն այն ընկերներն են, վորոնք կուսակցության մեջ մտել են վերակառուցման շրջանում, սոցիալիստական ծավալուն հարձակման շրջանում: Կուսակցական կազմակերպության նման կազմը հատկանշական է մեր շատ

և շատ խոշոր ձեռնարկությունների համար: Ուրիշակ՝ Մոսկվայի կուսակցական կազմակերպության կազմի վերաբերող տվյալները ցույց են տալիս, վոր նրա շարքերում 50 տոկոսից ավելի կոմունիստներ ունեն 1929, 1930 և 1931 թվերի ստատ: Կուսակցական կազմակերպության աճման հետ միասին աճում են և կուսակցական ղեկավար աշխատանքի յեն առաջ քաշվում համեմատաբար յե րիտասարդ կուսակցական կադրեր: Ընկ. Ստալինը ղեկուս կուսակցության 15-րդ համագումարում ընդգծում էր մեր կուսակցական կադրերի ամսման փաղափակյալ հսկայական նշանակությունը, վոր հանդիսանում է մեր կուսակցության վիթխարի աճման նշաններից մեկը:

«Անժխտելի յե, — ասում էր ընկ. Ստալինը, — վոր այս վերջին տարիներում մեր կուսակցության հին կադրերի շարքերն են անցել ներքեից բարձրացող նոր կադրեր, վորոնք բաղկացած են գլխավորապես բանվորներից: Յեթե առաջ մեր կադրերը հաշվում էյին հարյուրներով և հազարներով, ապա այժմ մենք պետք է նրանց հաշվենք տասնյակ հազարներով: Յես կարծում եմ, յեթե սկսենք ամենաստորին կազմակերպություններից, ցեխայիններից, ողակայիններից և ղենանք ղեկի բարձր ամբողջ Միություն մեջ,

մեր կուսակցական կադրերը, վորոնք իրենց խոշոր մեծամասնությամբ բաղկացած են բանվորներից, այժմ կազմում են 100.000 հոգուց վոչ պակաս, սա հանդիսանում է մեր կուսակցության մեծագույն աճումը, սա հանդիսանում է մեր կադրային կազմի մեծագույն աճումը, նրա գաղափարական-կազմակերպչական փորձի աճումը, նրա կոմունիստական կուլտուրայի աճումը» (Համկոմկուսի (բ) 15-րդ համագումարի սղադր. հաշվ., էջ 70) :

15-րդ կուսակցական համագումարից հետո, սոցիալիստական ծավալուն արշավի տարիներում մեր կուսակցական կադրերի աճման, նրանց գաղափարական կազմակերպչական փորձի այդ աճման պրոցեսը կուսակցությանը տվեց հարյուր հազարավոր նոր կուսակցական կադրեր: Այդ կուսակցական նոր կադրերը կոփվեցին ամբողջ Փրոնտով սկսված սոցիալիստական ծավալուն արշավի պայմաններում, մի արշավ, վոր կատարում է իՍՍՀՄ հերոսական պրոլետարիատը կուսակցության ղեկավարությամբ:

Սակայն կուսակցական այդ կադրերին հաճախ հենց պակասում է կազմակերպչական փորձը, նրանք կարիք ունեն գեոևս իրենց գաղափարական քաղաքական մակարդակի հետագա բարձ-

րացման: Հաճախ առաջին հերթին կազմակերպչական փորձի պակասով, մանավանդ ստորին բջիջների քարտուղարների վերաբերմամբ, բացատրվում է վարչարարության, տնտեսական ղեկավարության փոխարինման, պրոֆմիությունների աշխատանքն իրենց վրա վերցնելու տենդենցը և այլն: Վոչ բավարար չափով փորձառու կազմակերպիչը, փոխանակ ստիպելու, վոր աշխատեն հաղորդիչ փոկերը, առաջին հերթին պրոֆմիությունները, փոխանակ ապահովելու տնտեսական ապարատի հստակ աշխատանքը, իր վրա յե վերցնում ամեն ինչ, և հաճախ դանազան ընթացիկ գործերի մեջ ընկնելով, աչքաթող է անում քաղաքական, իրական ղեկավարությունը, անտեսում է հիմնական վճռական հարցերը:

Կազմակերպչական ոգնության ուժեղացումը կուսակցական վերադաս կոմիտեների կողմից, ստորին կուսակցական կադրերի հրահանգման ուժեղացումը — հանդիսանում է կուսակցական աշխատանքի անհետաձգելի խնդիրը: Ստորին կադրերի հրահանգման բարելավումով նվազում է նրանց կազմի վորոչ հոսունությունը, վոր այժմ տեղի ունի: Բարձրացնել բջիջների ֆարտուղարների թեորեական պատրաստությունը, ղինել նրանց մարքսիզմի-լենինիզմի հեղափոխական

թեորեայի հիմունքների դիտությամբ, մեր սոցիալիստական եկոնոմիկայի դիտությամբ — այս նպատակն են հետապնդում կուսակցական ակտիվի տեսական պատրաստման դանդաղան ձևերը։ Այստեղ հատուկ ուշադրության արժանի յե Մոսկվայի բՆԻՆների քարտուղարների կոմունիստական ԲՈՒՀ-ը, վորը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում արդեն ձեռք ե բերել իր առաջին հաջողությունները։

Կուսակցական բՆԻՆների աշխատանքի բովանդակությունը յերբեմն դրված չե պատշաճ բարձրության վրա։ Չխոսելով արդեն այն մասին, վոր մի քանի բՆԻՆներում կուսակցական ժողովներ քիչ են գումարվում, յերբեմն մի քանի ամիսը մի անգամ, տնտեսական հարցերը դրվում ե քննվում են այնպես, վոր այդ բՆԻՆների ժողովները գրեթե չեն տարբերվում արտադրական խորհրդակցություններից։ Կուսակցական բՆԻՆում հարցի նման քննարկման դաստիարակչական-քաղաքական նշանակությունը կորչում ե։ Կարողանալ բարձրացնել գործնական կոնկրետ հարցերի քննարկումը քաղաքական բարձր աստիճանի վրա, կապակցելով իր ձեռնարկության կյանքի կոնկրետ փաստերը սոցիալիստական շինարարության ամբողջ վիթխարի աշխատանքի, համաշխարհային պրո-

լետարական հեղափոխության հեռանկարների ե խնդիրների հետ, ցույց տալով, թե ինչ նշանակություն ունի սոցիալիզմի հաղթանակի համար տվյալ ձեռնարկության, ցեխի, ագրեգատի անընդհատ աշխատանքը — քաղաքական այս փորձին մեր բՆԻՆների ղեկավարներից վոմանք դեռ չեն տիրապետել։ Ճիշտ, լուրջ պատրաստված ե անցկացված կուսակցական ուր կնպաստի ե՛լ ավելի բարձրացնելու կուսակցական բՆԻՆների գաղափարական քաղաքական կյանքի մակարդակը ե հանդիսանում ե յերիտասարդ կուսակցականների մարքս-լենինյան դաստիարակության մեթոդներից մեկը։

Խորապես սխալ կլիներ մարքսիստական-լենինյան դաստիարակություն ասելով հասկանալ միայն բուն պրոպագանդիստական աշխատանքը կուսյուսավորության ցանցում, թեև այդ աշխատանքն ունի բացառիկ կարևոր նշանակություն։ Կուսակցության յերիտասարդ անդամների ե թեկնածուների քաղաքական դաստիարակման, ուղորտունիլմի ե հատկապես աջ թեքման դեմ, վորպես ներկա ետապում գլխավոր վտանգի, մղված պայքարում նրանց կռելու ե կոփելու գործում հսկայական դեր են խաղում կուսակցական ժողովները։ Կուսակցական պարտականություններ

բի, կուսակցական բեռնավորումներ ճիշտ բաշխումը նույնպես հանդիսանում է դաստիարակութեան մեթոդներից մեկը: Սակայն յերբեմն կուսակցական բջիջները թերազնահատում են կուսակցական պարտականությունների դաստիարակչական նշանակությունը, վորոշ բեռնավորումներ կրում են զուտ ձեական բնույթ (անդամավճարների հավաքում, թերթերի բաժանորդագրում և այլն), պարտականությունների կատարումը չի ստուգվում: Բավարար չափով չեն ստուգվում թեկնածուի անհատական հատկությունները, թե վոր չափով կուսակցություն թեկնածուն ընդունակ է իրագործելու կոմունիստի ավանդարային դերն արտադրության մեջ, թե զուտ արտադրական և թե քաղաքական տեսակետից:

Այնտեղ, ուր թույլ է դրված կադմակերպչական-կուսակցական աշխատանքը, կոմունիստները չեն հանդիսանում արտադրություն առաջավոր ուժերը: Այսպես, որինակ՝ Սարատովի կոմպանի դործարանում սոցմրցման և հարվածայնություն մասնակցող բոլոր բանվորների տոկոսը կազմում էր 76,3, իսկ կոմունիստներին՝ ընդամենը՝ 62,3:

Կադմակերպչական-կուսակցական աշխատանքի լիակատար ուժեղացումը, կուսկոմների կազ-

մակերպչական-հրահանգչական սեկտորների և բջիջների կազմակերպումների աշխատանքի ուժեղացումը հանդիսանում է որվա հրատապ խնդիրը: Միանդամայն իրավացի կերպով ընկեր Լ. Մ. Կադանովիչը կուսակցություն 16-րդ համագումարում ընդգծում է, վոր՝ «Առանց հմուտ կերպով միացնելու ճիշտ քաղաքականությունը կադմակերպչական ճիշտ պրակտիկայի հետ, մենք յերբեք չենք հասնի այն մեծագույն հաջողություններին, վորոնց մասին այստեղ յերեկ զեկուցում եր ընկեր Ստալինը»:

Կադմակերպչական-կուսակցական աշխատանքն ուժեղացնելու հետ միաժամանակ նոր պայմաններում պետք է նշանակելի չափով ուժեղացվի նաև կուսակցական մասսայական, ագիտացիոն աշխատանքը: Վերջին յերկու տարվա ընթացքում արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի մեջ լցվել են չորս միլիոն հոգի նոր բանվորներ: Բանվոր դասակարգի այս նոր լրացումները, վորոնց մի մասը յեկել է գյուղից, մանրբուրժուական միջավայրից, կարիք ունեն սխտեմատիկ բացատրական աշխատանքի: Այնինչ շատ կուսակցական կադմակերպությունների ուշաբուրությունը դեպի ագիտացիայի հարցերը վերջին շրջանում զգալի չափով թուլացել է, մասսանե-

րում ազխտացիոն—բացատրական աշխատանք տա-
նելու նշանակութիւնը թերագնահատվում է :

Բանվորական ընդհանուր ժողովներում դեր-
վող գեկուցումների վորակը վոչ միշտ բավարա-
րում է աուղիտորային, և պետք է ասել, վոր շատ
ձեռնարկութիւններում համեմատաբար քիչ են
անցկացվում միտինգներ և ժողովներ : Դեռևս
թույլ է դրված խմբակաւ և անհատակաւ ազի-
տացիայի գործը : Կուսակցութեան անդամներից և
թեկնածուներից վոմանք դեռևս չեն կարողանում
կատարել յուրաքանչյուր կուսակցականի ամենա-
առաջին պարտականութիւնը — լինել անկուսակ-
ցական բանվորների քաղաքական ուղեցույցը —
դրա համար պակասում է քաղաքական պատրաս-
տականութիւնը : Դժբախտաբար կան նաև այն-
պիսի կուսիսմբեր, վորոնք յերբեք մասսայական
աշխատանք չեն տանում : Ահա որինակ՝ ինչ կար-
ծիք են հայտնում կուսիսմբերից մեկի աշխա-
տանքի մասին մեքենաշինարարական մի խոշոր
գործարանի հիմնական ցեխի անկուսակցական
բանվորները . «Անկուսակցական բանվորներն ա-
սում են, վոր նրանց հետ միասին ցեխում աշխա-
տում են կուսակցականներ : Նրանք բոլորը բերան-
ները փակում են և վոչինչ չեն ասում, վոչ մի

հարցի հետակ, ձիշտ պատասխանը չես կարող
ստանալ» :

Մասսաներին մոբիլիզացիայի յենթարկել
դժվարութիւնները հաղթահարելու համար հնա-
րավոր են միայն այն պայմանով, վոր սխտեմա-
տիկ բացատրական աշխատանք տարվի բոլոր ըն-
թացիկ հարցերի վերաբերմամբ, կապակցելով
այդ հարցերը տնտեսական ընդհանուր իրադրու-
թեան, սոցիալիստական շինարարութեան ընդ-
հանուր խնդիրների հետ :

Խորհրդային առևտրի, կոոպերացիայի, գնե-
րի, բրակի և պարապուրդների, սպեցհագուստի,
արգֆինպլանների կատարման վերաբերող հար-
ցերը, միջադրային դրութեան հարցերը — այս
ամենը պահանջում են բացատրական աշխատանք
խմբական և անհատական ազխտացիայի, մամու-
լի, ժողովների, միտինգների և այլի միջոցով :
Բացառիկ կարևոր նշանակութիւն ունի սխտե-
մատիկ աշխատանքն ազխտատորների հետ, նրանց
հրահանգումը :

Ազխտացիաւ չպետք է անտեսի սուր հար-
ցերը : Յեթե մեր բայլէիկ-պրոպագանդիստը,
մեր ազխտատորը, մեր տնտեսավարը բանվորնե-
րին պատասխան չի տալիս նրանց հուզող հարցե-
րի, այս կամ այն տարակուսանքների առթիվ —

դերանից յերբեմն կարող ե ոգտվել զասակարգած
յին թշնամու ազենտուրան :

Անդասակարգ սոցիալիստական հասարակու-
թյան կառուցման, եկոնոմիկայի և մարդկանց
գիտակցութեան մեջ կապիտալիզմի մնացորդնե-
րը հաղթահարելու, բանվորների շրջանում մանր-
բուրժուական ազդեցութիւնները հաղթահարե-
լու համար մղված հերոսական մեծ պայքարում
առաջնակարգ տեղ պետք ե գրավեն պրոֆմիու-
թյունները, վորոնք հանդիսանում են, Լենինի
խոսքերով, կոմունիզմի դպրոց :

Պրոֆմիութիւնները համամիութենական
Ծրդ համագումարը բայլչեիկյան ինքնաքննադա-
տութեան հիման վրա մոբիլիզացիայի յե յենթար-
կում բոլոր ուժերը՝ պայքարելու հնգամյակի
չորրորդ, ավարտական տարվա ծրագրերի կա-
տարման, յերկրորդ հնգամյակի լավագոյն պատ-
րաստման, դեպի աշխատանքը սոցիալիստական
վերաբերմունք դաստիարակելու, նոր դիսցիպլի-
նա դաստիարակելու համար, բանվոր դասակար-
գի նյութական-կենցաղային պայմանների հետա-
զա բարելավման, մասսաների կուլտուրական
մակարդակի բարձրացման, պրոլետարիատին
դասակարգայնորեն խորթ ազդեցութիւնները
ներթափանցման դեմ պայքարելու համար :

Սոցիալիզմը ԽՍՀՄ-ում ձեռք ե բերել վճռա-
կան հաջողութիւններ : Սակայն դասակարգային
պայքարը ԽՍՀՄ-ում շարունակվում ե : 17-րդ
համամիութենական կուսկոնֆերանսը նշեց, վոր
«հետագայում ևս անխուսափելի յե դասակարգա-
յին պայքարի սրումն առանձին մոմենտներում !
հատկապես առանձին ուղիներում, սոցիալիս-
տական շինարարութեան առանձին փակատա-
ւերում, և դրա հետ միասին ընդգծում ե բուր-
ժուական ազդեցութիւնների անխուսափելի պահ-
պանման, իսկ վորոշ պայմաններում նաե ուժե-
ղացման անխուսափելիութիւնն աշխատավոր-
ների առանձին շերտերի և խմբերի վրա, դեռ
յերկարատե ժամանակի ընթացքում պրոլետա-
րիատին խորթ դասակարգային ազդեցութիւն-
ների ներթափանցման անխուսափելիութիւնը
բանվորների շրջանում և նույնիսկ կուսակցու-
թեան մեջ : Նկատի ունենալով այդ, կուսակցու-
թեան առաջ դրված ե պրոլետարական դիկտա-
տուրան ամրապնդելու և ուղորտունիզմի դեմ,
հատկապես աջ թեքման, վորպես գլխավոր
վտանգի տվյալ ետապում, պայքարն ե'լ տվելի
ծափալելու խնդիրը» (Համկոմկուսի 17-րդ կոն-
ֆերանսի բանաձևից) :

Ե'լ ավելի ամրապնդել պրոլետարիատի դիկ-

տատուրայի բոլոր որդաններն ու լծակները, լա-
վացնել կուտակելության և մասսաների միջև հա-
ղորդիչ փոկ հանդիսացող պրոֆմիությունների,
կոմյերիտմիության և այլ կազմակերպություն-
ների աշխատանքը, ե՛լ ավելի բարձրացնել կու-
տակցական շարքերի մարտունակությունը, կազ-
մակերպչական-կուտակցական և դաստիարակ-
չական աշխատանքը բարելավելու միջոցով —
այդ և պահանջում մեր մեծ, համաշխարհային-
պատմական նշանակություն ունեցող պայքարը
հանուն անդառակադո սոցիալիստական հասա-
կության կառուցման:



Պետհրատի տպարան

ԳՒ. 7495 (Բ) ՊԱՏՎԵՐ № 1711 Հրատ. 2215 ՏԻՐԱԺ 5000

Սրբազրեցին Հ. ՍԱՌԻԿԾԱՆ և Ա. ՃՈՒՂՈՒՐԾԱՆ

Հանձնված և արտադրության

Ստորագրված և տպագրելու

ՀՀ Ազգային գրադարան



N0195585

Photograph mounting

11. 1890 (25) 1891 1892 1893 1894 1895 1896 1897 1898 1899 1900

1890 1891 1892 1893 1894 1895 1896 1897 1898 1899 1900

1890 1891 1892 1893 1894 1895 1896 1897 1898 1899 1900

1890 1891 1892 1893 1894 1895 1896 1897 1898 1899 1900